

Հարցաշար 2023 թ.  
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մարզային փուլ  
10–րդ դասարան - 120 րոպե

№ 1-8

*Ընտրովի պատասխանով առաջադրանքներ*

1. Ինչպե՞ս Պիղատոսն արտահայտեց Հիսուսին մահվան դատապարտելու որոշման վերաբերյալ իր անհամաձայնությունը. *(0,5 միավոր)*
  - 1) վիճեց քահանայապետերի հետ
  - 2) ծնկի իջավ և աղոթեց
  - 3) ջուր վերցրեց և բոլորի առջև լվաց ձեռքերը
  - 4) Քահանայապետերին և դպիրներին առաջարկեց դիմել Կայսրի քահանայապետին
2. Ե՞րբ է Աստվածաշունչն առաջին անգամ տպագրվել հայերեն. *(0,5 միավոր)*
  - 1) 1512 - 1513 թթ.    2) 1565 - 1566 թթ.    3) 1662 - 1663 թթ.    4) 1666 - 1668 թթ.
3. Ս. Թադևոս առաքյալի քարոզների շնորհիվ քրիստոնյա է դարձել. *(0,5 միավոր)*
  - 1) Սանատրուկ արքայի քույր Ռզուհին    2) Սանատրուկ արքայի դուստր Սանդուխտը
  - 3) Տրդատ արքայի քույր Խոսրովիդուխտը    4) Տրդատ արքայի կին Աշխենը
4. Եզրիպտական մամլուքների կողմից Հռոմկլա կաթողիկոսանիստ ամբոցի գրավումից հետո ո՞ր կաթողիկոսն է գերեվարվել մամլուքների կողմից. *(0,5 միավոր)*
  - 1) Հակոբ Ա. Կլայեցի    2) Ստեփանոս Դ. Հռոմկլայեցի
  - 3) Գրիգոր Է. Անավարզեցի    4) Կոստանդին Գ. Կեսարացի
5. Ի՞նչ հարց է քննարկվել 1562 թ. հրավիրված Մեքաստիայի գաղտնի խորհրդածողովում. *(0,5 միավոր)*
  - 1) քաղկեդոնականություն ընդունելու հարցը
  - 2) Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը
  - 3) ամբողջ Հայաստանի ազատագրության հարցը
  - 4) Արևելյան Հայաստանի ազատագրության հարցը
6. Հին աշխարհի մեծ մտածողներից ո՞վ հանդես եկավ բարոյագիտության մասին սոփեստների հոռետեսության դեմ. *(0,5 միավոր)*
  - 1) Պլատոնը    2) Սոկրատեսը    3) Արիստոտելը    4) Սոֆոկլեսը
7. Ո՞վ է «Ով սիրո մեջ է ապրում, բնակվում է Աստծու մեջ, և Աստված բնակվում է նրա մեջ» խոսքերի հեղինակը. *(0,5 միավոր)*
  - 1) Ս. Գրիգոր Տաթևացի    2) Ս. Ներսես Շնորհալիս
  - 3) Ս. Մովսես Տաթևացի    4) Ս. Հովհաննես առաքյալը

8. Յոթ առաքինություններից ո՞րն է բնութագրվում «ուշիմ», «զգոն», «առաքինի» հատկանիշներով. (0,5 միավոր)

- 1) Ժուժկալությունը 2) ողջախոհությունը 3) ողորմածությունը 4) խոնարհությունը

**№ 9-12**

**Կատուցված պատասխանով առաջադրանքներ**

9. 855 թ. ----- Շիրակավանում ժողով գումարեց, որի ժամանակ հայոց կաթողիկոս ընտրվեց Զաքարիա Ա Չազեցին: (1 միավոր)

10.----- թ. թուրքական կառավարությունը հատուկ հրամանագրով բողոքական եկեղեցին ճանաչեց որպես Հայոց եկեղեցուց անջատ կրոնական համայնք: (1 միավոր)

11.-----ը սրածայր գլխադիր է. որը բացառապես կրում են Հայոց եկեղեցու կուսակրոն հոգևորականները: (1 միավոր)

12. ----- գրել է. «Ով լավ է ներքուստ, նաև զվարթ է երևում արտաքուստ»: (1 միավոր)

**№ 13-14**

**Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից**

13. Հայոց եկեղեցու նվիրապետական աթոռների առաջին գահակալներին համապատասխանեցնել նվիրապետական աթոռների անվանումներին. (1 միավոր)

1. Դավիթ Թոռնիկյան
2. Հովակիմ Եպիսկոպոս
3. Կարապետ Եվդոկացի
4. Աբրահամ Եպիսկոպոս

1	
2	
3	
4	

- ա) Երուսաղեմի հայոց պատրիարքություն
- բ) Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն
- գ) Սսի կաթողիկոսություն
- դ) Աղթամարի կաթողիկոսություն

14. Համապատասխանեցնել.

(1 միավոր)

- 1) Ծես
- 2) Վարք
- 3) Մարտիրոս
- 4) Սկիհ
- 5) Նավակատիք
- 6) Նարոտ
- 7) Նշխար

1	
2	
3	
4	
5	
6	
7	

- ա) Նորակառույց կամ վերանորոգված եկեղեցու օծման հանդիսավոր արարողություն
- բ) Մենակյաց անապատական, աշխարհիկ կյանքից ու վայելքներից հրաժարված մարդ
- գ) Պատարագի ժամանակ օգտագործվող արծաթե կամ ոսկե բաժակ
- դ) Այսպես են կոչում նրանց, ովքեր նահատակվել են՝ վկայելով իրենց հավատը Քրիստոսի հանդեպ
- ե) Կարմիր և սպիտակ թելերի հյուսվածք, որն օգտագործվում է մկրտության ժամանակ
- զ) Պատմություն, որի մեջ քրիստոնյան մեռնում է իր բնական մահով և սրբացվում է
- է) Եկեղեցում որոշակի կանոնակարգով կատարվող արարողությունների ամբողջություն
- ը) Հաղորդության ժամանակ օգտագործվող կլոր հաց, վրան խաչի պատկերով

№ 15-17

*Աշխատանք սկզբնաղբյուրով*

15.

*«Եկեղեցին Հայկական մեն մի քարին տակ գետնի,  
 Դեպի երկինք բարձրացող գաղտնի ճամփա մը ունի...  
 Եկեղեցին Հայկական Հայ Հոգիին և Մարմնուն  
 Զրբահանդէ՛րձն է փայլուն, մինչ իր խաչերն են դաշուն,  
 Եվ զանգակներն են բումբո՛ւն և երգն է միշտ Հաղթություն...»:*

- 1) Ո՞վ է բանաստեղծության հեղինակը:

(1 միավոր)

16. *«Բարին երբեք չի մահանում: Եթե մահանար, աշխարհում մարդիկ գոյություն չէին ունենա, ոչ մի տեղ կյանք չէր լինի»:*

- 1) Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.

(1 միավոր)

17. «Լավ է՝ ես մեռնեմ, քան թե անարժան գործի համար հավատացյալներին մատնեմ անօրենների ձեռքը: Քանի որ [թագավորը] իր անձի վրա Քրիստոսի հոտի կնիքն է կրում»:

1) Ո՞ւմ աշխատությունից է մեջբերված հատվածը: (1 միավոր)

---

2) Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը: (1 միավոր)

---

№ 18-19

*Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով*

18. 1870 թ. Հայաստանում գործող թեմական կամ վիճակային դպրոցներում *n* ը երկու առարկաները չէին դասավանդում. (1 x 2 = 2 միավոր)

- 1) Ճարտարապետություն
- 2) Ընդհանուր պատմություն
- 3) Ֆիզիկա
- 4) Կենսաբանություն
- 5) Հանրահաշիվ


19. Ստորև թվարկված տոներից *n* ը երկուսը Տերունական տոներ չեն. (1 x 2 = 2 միավոր)

- 1) Խաչվերաց
- 2) Ս. Հարություն
- 3) Կաթողիկե Ս. Էջմիածնի տոն
- 4) Տյառնընդառաջ
- 5) Ս. Սարգիս
- 6) Ս. Մարիամ Աստվածածնի վերափոխման տոն
- 7) Ս. Թարգմանչաց տոն
- 8) Համբարձման տոն


№ 20

*Շարադրանք (2 միավոր)*

*ա. Ի՞նչ գիտեք «Այն ամենը, ինչ կամենում եք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես էլ դուք արեք նրանց» արտահայտության մասին:*

*բ. Մեկնաբանե՛ք այն:*